Գևորգ ԱՅՎԱԶՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐՈՑԸ 1830 - 1880-ական թթ.

1829 - 1831թթ. արևմտահայերի ներգաղթի ժամանակ Գյումրիում հաստատված վերաբնակների խմբերի մեջ որոշակի թիվ էին կազմում բանիմաց ու գրագետ մարդիկ, մանկավարժության զորձում հմտացած քահանաներ: Արդեն 1830-ական թթ. սկզբներին նրանք Գյումրիում բացեցին իրենց մասնավոր դպրոցները: Հայտնի էին բաբերդցի Հովհաննես քահանա Տեր-Մարտիրոսյանի և տիրացու Հովհաննես Դավթյանի դպրոցները,[1] լավ ուսուցչի համբավ ունեին կարսեցի Հովհաննես քահանա Տեր - Գաբրիելյանը,[2] Կարապետ, Խորեն խալֆաները[3] և այլք:

Հովհաննես Կարբեցի կաթողիկոսի կարգադրությամբ 1833թ. Գյումրիում բացված Հովհաննես Դավթյանի դպրոցը տեղավորված էր Մայր Աթոռին պատկանող մի «սենյակում»: Հայ երեխաները վճարովի հիմունքներով այստեղ սովորում էին հասարակ ընթերցանություն և քերականության արվեստ:[4] Փաստաթղթերը վկայում են, որ 1835-1836թթ. ընթացքում Գյումրիի հոգևոր փոխանորդ Ստեփաննոս արքեպիսկոպոս Խաժակյանն անհաշտ վերաբերմունք ուներ Հովհաննես Դավթյանի և նրա դպրոցի նկատմամբ:[5]

Ալեքսանդրապոլի կրթական կյանքի կազմակերպմանը նոր որակ հաղորդեց Ալեքսանդրապոլի հոգևոր վիճակի փոխանորդ Նիկողայոս եպիսկոպոս Մարուքյանը (1837-1847 թթ.)՝[6] հետամուտ լինելով 1837 թ. հունվարի 1-ից գործադրվող «Պոլոժենիե»-ի («Հայ-լուսավորչական հավատի հոգևոր գործերի կառավարման կանոնադրություն») այն դրույթին, ըստ որի՝ եկեղեցական թեմերի վիճակներում կարող էին բացվել ծխական դպրոցներ:[7] Ընդառաջելով հասարակության ցանկությանը՝[8] Նիկողայոս եպիսկոպոսը 1837թ. աշնանն Ալեքսանդրապոլի հոգևոր վիճակում սկսում է կամավոր նվիրատվություններ հավաքել առաջնորդարան և վարժարան կառուցելու համար:[9] Դեռ 1837թ. օգոստոսի 7-ին տեղական իշխանությունները նրան այդ նպատակով հողատարածք էին հատկացրել:[10] 1838թ. սկսվում է Սբ Աստվածածին եկեղեցուն կից առաջնորդարանի, կրպակների և «վասն նորավարժից» սենյակների կառուցումը:[11]

1838 թ. Հովհաննես Դավթյանը և նրա դպրոցը նորից հայտնվում են բարձրագույն հոգևոր իշխանության ուշադրության կենտրոնում: Հովհաննես Կարբեցի կաթողիկոսի 1838 թ. հունիսին Ստեփաննոս արքեպիսկոպոս Արղությանցին ուղղած մի

---

[1] *Ե.Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Կ.Կոստանյանցի ֆոնդ, վավերագիր 430, թերթ 2: Մանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը 19-րդ դարի առաջին կեսին, Եր., 1964, էջ 272:*

[2] *Կրպէ, Կարս քաղաք, Մոսկուա, 1894, էջ 41:*

[3] *Գյումրի. Քաղաքը և մարդիկ, Գյումրի, 2009, էջ .*

[4] *Մանթրոսյան Մ., նշվ. աշխ., էջ 272:*

[5] *Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան), Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 85, վավերագիր 134, թղթ. 88, վ. 101:*

[6] *Շիրակի (հետո՝ Ալեքսանդրապոլի) փոխանորդությունը մտնում էր Երևանի թեմի մեջ, որի ամբիոնական առաջնորդն Ամենայն Հայոց կաթողիկոսն էր (Տե՛ս Հակոբյան Պ., Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 2003, էջ 121):*

[7] *«Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Եր., 2002, էջ 865:*

[8] *Обозреніе россійскихъ владеній за Кавказомъ, въ статистическомъ, этнографическомъ и финансовомъ отношеніяхъ, часть II. СПб., 1836, с. 305:*

[9] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 91, վ. 98:*

[10] *Ղլտճեան Ա., Համառօտ պատմութիւն Ալէքսանդրապոլի Հայոց հոգեւոր վիճակային դպրոցի (1840 - 1912), Ալէքսանդրապոլ, 1912, էջ 17:*

[11] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 98, վ.146,153,158:Ղլտճեան Ա., նշվ. աշխ.,էջ 18:*

գրությունից իմանում ենք, որ Նիկողայոս եպսիկոպոսը կոնսիստորիայի պահանջով Հ. Դավթյանին արգելել էր զբաղվել մանկավարժական գործունեությամբ:[12] Այդ պահին դպրոցում սովորում էին 65 աշակերտներ, որոնցից միայն երկուսն էին հոգևորականների որդիներ (Պետրոս Տեր-Կարապետյան և Եղիազար Տեր-Հարությունյան):[13] Երևանի թեմի առաջնորդական փոխանորդ Ստեփաննոս արքեպիսկոպոս Արղությանցը, անդրադառնալով կոնսիստորիայի կարգադրությանը, գրում է. «Առաջին. մեք չունինք զհրաման բարձրագոյն իշխանութեանց բանալոյ այդր զվարժարան ոչ շտատիս եւ ոչ առանց շտատի: Երկրորդ. լաւապէս գիտակ իսկ է սուրբ եղբայրդ մեր զդրութիւն այժմեան կարգադրութեան, զի առանց կամաց բարձրագոյն իշխանութեանց ոչ է մարթ առնել զայդպիսի մեծագոյն իրս կամ գործս»:[14] Ելնելով դրանից՝ նա առաջարկում է Հ. Դավթյանին պահել այնքան աշակերտ, ինչքան որ վերջինս ցանկանում է, սակայն ուսուցչին վճարել աշակերտների ծնողներից ստացվող ուսման վարձից (տարեկան 1 արծաթ ռուբլի): Միաժամանակ երկու եպիսկոպոսները պայմանավորվում են իրենց աշխատավարձերից տարեկան 25-ական արծաթ ռուբլի որպես աշխատավարձ տալ Հ. Դավթյանին:[15] 1839թ. մարտի 10-ին Ալեքսանդրապոլի հոգևոր վիճակի փոխանորդը տեղյակ է պահում Ստեփաննոս Արղությանցին, որ աղքատ աշակերտների ծնողները դժվարանում են վճարել ուսուցչի վարձը: Խնդրում է «զյատուկ տնօրէնութիւն», քանի որ մասնավոր վարձատրությամբ ուսուցիչը «ոչ կարէ ապրել»:[16] Ամենայն հավանականությամբ արդեն 1840թ. Հովհաննես Դավթյանի դպրոցը այլևս գոյություն չուներ: Շուտով նրա փոխարեն իշխանությունների օրինական թույլտվությամբ բացվում է Ալեքսանդրապոլի «հոգևոր» դպրոցը:[17]

1840թ. սեպտեմբերից մինչև 1841թ. հունվար ընկած ժամանակահատվածում Ալեքսանդրապոլում մոլեգնող ժանտախտի համաճարակի[18] պատճառով նորաբաց դպրոցը կանոնավոր չէր գործում: Դպրոցի առաջին ուսուցիչներից էին Հովհաննես Տեր-Մարտիրոսյանը, Հակոբ Շահ-Աբասյանցը և Նիկիտա Բոգոմոլովը:[19] 1841թ. սկզբներին դպրոցում անվճար սովորում էին 60 երեխաներ,[20] դասավանդվում էին հայերեն, ռուսերեն, «եկեղեցական ուսմունքներ», վայելչագրություն: Ընդ որում, 1841-1843թթ. հայերեն և ռուսերեն լեզուներն անվճար դասավանդում էր Հակոբ Շահ-Աբասյանցը: 1843 թվականից ռուսերենի ուսուցիչը Ն. Բոգոմոլովն էր: Նա նույն տարվա հունվարի 21-ին Ալեքսանդրապոլում բացում է մասնավոր դպրոց,[21] բայց շարունակում

---

[12] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 97, վ. 136:*
[13] *Նույնը:*
[14] *Նույն տեղում, թղթ. 96, վ. 114:*
[15] *Նույնը:*
[16] *Նույնը:*
[17] *Ղլտճեան Ա., նշվ. աշխ., էջ17: Մանթրոսյան Մ., նշվ. աշխ., էջ 273: Ամետիսյան Մ., Ալեքսանդրապոլի Փրկչի արական դպրոցը, «Բանվոր», Լենինական, 1988, N 33, էջ 3: Հմմտ. Արարաքելեանց Մ., Մի քանի տեղեկութիւնք Աղէքսանդրապոլու Հայոց ուսումնարանի, Ընթերցարանի եւ Բարեգործական նպատակաւ կազմուած Ընկերութեանց վերայ, «Արարատ», Ս. Էջմիածին, Բ տարի, թիւ Ե, էջ113: Խոջայեանց Ց., Գիւմրի, «Արարատ», 1871, Դ տարի, թիւ Թ, էջ 314: ԳԱԹ, Կ. Կոստանյանցի ֆոնդ, վ. 430, թ. 16: Պարսամյան Վ., Հայ ազատագրական շարժումների պատմությունից (Ուսումնասիրություն և փաստաթղթեր), Եր., 1958, էջ 247: Պատմական որոշ աղբյուրներում նշվում է, որ հոգևոր դպրոցը հիմնադրվել է 1841 թ. (Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ.107, վ.374, թ.15: Ալեքսանդրապոլից, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1881, N 48, էջ 3):*
[18] *Акты, собранные Кавказской археографической комиссией (АКАК), т. 9, Тифлис,1884, с. 84-89.*
[19] *Հառիճայի վանական ընկերութեան յիշատակարանն ու հաշիւը 1850-1882թ.,Աղէքսանդրապոլ, 1909, էջ18:*
[20] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 101 թ, վ. 49, թ.1: Մանթրոսյան Մ., նշվ. աշխ., էջ 273:*
[21] *Кавказский календарь на 1846 год, Тифлис, 1845, Отд. II, с. 145.*

է «հոգևոր» դպրոցում ռուսերենի դասավանդումը: 1843 թվականից ուսուցումը դառնում է վճարովի: 1844 թ. առաջնորդարանին կից «հոգևոր» դպրոցն ուներ երկու դասարան, որտեղ սովորում էին 137 աշակերտներ: Առաջին դասարանում սովորում էին հասարակ ընթերցանություն, «վայելչագրութիւն հայոց եւ ռուսաց լեզուի», երկրորդում՝ թվաբանություն, քերականություն, հայոց և ռուսաց լեզուների վայելչագրություն, ճարտասանություն, երաժշտություն, քրիստոնեական վարդապետություն: Վերջին երեք առարկաները դասավանդվում էին միայն մայրենի լեզվով:[22] Առաջադեմ աշակերտներից էին Հովհաննես Տեր-Մարկոսյանը, Հարությունը Հարությունյանցը և Գևորգ Մալխասյանցը: Դպրոցն այս կերպ, հավանաբար, իր գործունեությունը շարունակել է մինչև 1853թ. վերջերը, երբ սկսվում է Ղրիմի պատերազմը (1853-1856թթ.): Վերջինիս պատճառով դպրոցը փակվում է, իսկ շինությունը տրվում է վարձով մասնավոր անձի:

Տեղական և կովկասյան իշխանությունները,[23] սինոդը Ալեքսանդրապոլի հոգևոր վիճակի փոխանորդի և «հոգևոր կառավարության» վրա ճնշումներ էին գործադրում, որպեսզի նրանք արգելեն «հոգևոր» դպրոցում աշխարհիկ ծագում ունեցող երեխաների ուսուցումը: 1849թ. հոկտեմբերին սինոդի կողմից Ալեքսանդրապոլ գործուղված կոնսիստորիայի ավագ անդամ Մկրտիչ վարդապետի և սինոդի ատենադպիր Սուքիաս Թաղիանոսյանցի կարգադրությամբ արգելվում է աշխարհականների երեխաների ուսուցումը դպրոցում. «...պատուիրեալ են բարեկարգին Աղէքսանդրապօլու արտաքսեալ ի դոնէ եկեղեցւոյ զամեն մանկունս ծնեալս յաշխարհական ծնողաց չէ անյայտ զի քաղաքն Աղէքսանդրապօլ գոլով զուրկ ի կարգաւորեալ յուսումնարանէ Հայոց, մանկունք մեր շարունակելով զընթերցումն լեզուի մեր առ մարմնաւոր ուսուցիչս ոչ սակաւ օժանդակ լինի նոցայն յառաջադիմութիւն ունկնդրութիւն ժամերգութեան քողասացութիւն ընթեռնուլ զճաշոյ գիրս նն ուրեմն այս ներգործութիւն քննչաց ոչ առ այլ ինչ հայի, եթէ ոչ առ խոչընդոտն լինելն մանկանց մերոց ի կրթութիւն Հայոց լեզուի»:[24] 1851թ. օգոստոսին 20-ին Երևանի կոնսիստորիան Ալեքսանդրապոլի «հոգևոր կառավարության» քարտուղարի պաշտոնակատարի խնդրանքով միջնորդում է սինոդին, որպեսզի աշխարհականների երեխաներին թույլատրվի սովորել «մասնավոր հոգևոր դպրոցում»:[25] Հաշվի առնելով Ալեքսանդրապոլի հայ հասարակության ցանկությունը՝ 1854թ. սինոդը թույլատրում է, որ հոգևորականներից բացի դպրոցում սովորեն նաև աշխարհականները:[26] 1853թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլի հայ հասարակությունը սինոդից հոգևոր դպրոց բացելու իրավունք է խնդրում՝ «յաղագս անվախճան շարունակելոյ յայնմ զհայրենի դասատուութիւն և զլեզու և զայլն առաւելապէս զեկեղեցական ժամերգութիւնս»:[27] Նախատեսվում էր դպրոցի հոգաբարձությունը հանձնել Հովհաննես քահանա Տեր-Մարկոսյանին, Հակոբ Մատակյանցին և Մկրտիչ Բաբայանցին: Սինոդը չի ընդառաջում հասարակության խնդրանքին:

Ղրիմի պատերազմից հետո, Ալեքսանդրապոլի հոգևոր գործերի վերատեսուչների, Ալեքսանդրապոլի հոգևոր վիճակի փոխանորդ Վարդան վարդապետ Օձնեցու և տեղի «հոգևոր կառավարության» բազմաթիվ դիմումները հաշվի առնելով, սինոդը 1858թ. հունվարի 16-ին թույլատրում է բացել դպրոց:[28] Դպրոցի եկամուտը պետք է գո-

---

[22] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 107, վ. 374, թ.10:*
[23] *Նույն տեղում, թղթ. 129, վ. 192, թ. 1-2:*
[24] *Նույն տեղում, թղթ. 157, վ. 469, թ.1:*
[25] *Մանթրոսյան Մ., նշվ. աշխ., էջ 273 - 274:*
[26] *Նույնը:*
[27] *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 181, վ. 165: Մովսիսեան Յ., Յիշողութիւններ, Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆոնդ 57, ցուցակ 1, գործ 208, թ. 10:*
[28] *ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 208, թ. 10:*

յանաը Սբ Աստվածածնի պատկերից ստացվող եկամտի 2/3 - ից,[29] ուսման համար աշակերտների վճարած գումարներից (թոշակ) և բարեգործների նվիրատվություններից, հետագայում սրանց վրա ավելացան դպրոցապատկան կրպակներից, մոմավաճառությունից և Սբ Աստվածածին և Սբ Ամենափրկիչ եկեղեցիներում դրված գանձարկղերից ստացվող գումարները: Նորընտիր ուսուցչական խմբի մեջ մտնում էին Հ. քհն. Տեր-Մխիթարյանը, Հ. քհն. Սահառունյանցը, Կ. քհն. Տեր - Առաքելյանցը, Ա. և Մ. Արաբաջյանները, Ս. Չմշկյանցը, Մ. Խաչատրյանը, Գ. Մատինյանցը և այլք: Ուսուցչական կազմն անընդհատ փոխվում էր: 1860-ական թթ. սկզբներին ուսուցչություն էին անում Ա. Նալյանը, Հ. Լալայանը, Կ. Ջանիբեկյանը, Հ. քհն. Տեր-Մխիթարյանի, Հ. քհն. Սահառունյանցը, Կ. քհն. Տեր-Առաքելյանցը, Մ. Արաբաջյանը, Ա. Փափանյանը, Մ. Տեր - Մարտիրոսյանը և Բ. Տեր-Թադևոսյանը: Նրանք դասավանդում էին քրիստոնեական վարդապետություն, երգ (շարական), հայոց և ռուսաց լեզուների քերականություն, հայերեն և ռուսերեն ընթերցանություն, ճարտասանություն, թվաբանություն, հայոց և ռուսաց լեզուների վայելչագրություն, ազգային պատմություն: Ուսուցումն իրականացվում էր հին մեթոդներով, տեղ ուներ նույնիսկ ֆիզիկական պատիժը: Աշակերտների ստացած գիտելիքների որակը ստուգվում էր տարեվերջյան «հարցաքննությունների» կամ «հրապարակային քննությունների» ժամանակ (սովորաբար լինում էր մայիսի վերջին տասնօրյակին կամ հունիսին), որոնք անցնում էին մեծ հանդիսավորությամբ: Առաջադեմները պարգևատրվում էին գրքերով ու գովասանագրերով: Աշակերտներն իրենց գիտելիքները ցուցադրում էին նաև շարադրություններ և ճառեր գրելով: Հոգևոր դպրոցի սաների առաջին ինքնուրույն ստեղծագործությունները տպագրվել են Թիֆլիսի «Մեղու Հայաստանի», «Կռունկ հայոց աշխարհին» և այլ պարբերականների մեջ:

Հոգևոր դպրոցի շուրջը համախմբված մտավորականներն ամեն ինչ անում էին նրա զարգացման համար՝ օրինակ ունենալով Թիֆլիսի Ներսիսյան դպրոցն ու Մոսկվայի Լազարյան ճեմարանը: Ալեքսանդրապոլի հասարակական կյանքում դպրոցը շատ բարձր և առաջադիմական դեր ուներ: 1863թ. Ալեքսանդրապոլի «Ընթերցասիրական» ընկերությունը դպրոցին կից բացում է ընթերցարան: Նույն թվականին քուրայիսաբնակ Աղ. Մելիք-Հայկազեանի և իր ընկերների ջանքերով Ալեքսանդրապոլում հիմնադրվում է թատրոն: Կազմակերպիչները որոշում են բեմադրել Հ.Կարենյանի «Շուշանիկ» ողբերգությունը: Դերասանների ընտրությունը կատարվում է հոգևոր դպրոցի բարձր դասարանների աշակերտներից (Հ. Լալայանց, Մ. Տեր-Դավթյան, Ս.Արաբաջյան, Տ. Վարդապետրիկյանց, Հ. Բաղրամյանց, Հ. Խոջայանց, Հ. Քյանդարյանց, Հ. Սահրադյան և այլք): Առաջին ներկայացումը բեմադրվում է 1865թ. մայիսի 23-ին:[30]

1865-1868թվականներին հայ կրթական կյանքի ընդհանուր ակտիվության նվազման հետևանքով պակասում է Ալեքսանդրապոլի հասարակության և վերատեսուչների[31] կողմից դպրոցի նկատմամբ հոգատարությունը: Այդ պատճառով ուսուցիչներից շատերը հեռանում են:

Սակայն, հետագայում 1868-1869թթ. Սբ Էջմիածնի Ուսումնական հանձնաժողովի կազմած ծխական դպրոցների կանոնների և թեմական դպրոցների կանոնադրութ-

---

[29] *Սրբի պատկերը զանազան առիթներով տարվում էր Ալեքսանդրապոլի գավառի գյուղերը, որոնց բնակիչներն առատ նվերներ էին տալիս՝ բնամթերքի, անասունների և դրամի տեսքով:*

[30] *Քոչաբեանց Մ., Հայկական թատրոն Ալեքսանդրոպոլում, «Հայկական աշխարհի կռունկ», Թիֆլիս, 1865, N 5-6, էջ 183-184: Քաջքերունի, Հայկական ներկայացումներ Ալեքսանդրապոլում (Յիշողութիւններ), «Արձագանք», Թիֆլիս, 1892, N 53, էջ 1-2: Հառիճայի վանական ընկերութեան յիշատակարանն ու հաշիւը, էջ 280:*

[31] *1858-1868 թթ. քաղաքի հայ հասարակության համաձայնությամբ դպրոցը ղեկավարում էին երեք վերատեսուչներ:*

յան[32] հետևողությամբ բարելավվում է նաև Ալեքսանդրապոլի հոգևոր դպրոցի վիճակը: 1868թ. հուլիսին դպրոցի ուսուցիչներ Մ. Արաբաջյանը և Ա. Արշակունին ստեղծում են «Որբախնամ» ընկերություն՝ նպատակ ունենալով դասագրքերով և գրենական պիտույքներով ապահովել ազգային դպրոցների աշակերտներին: 1869 թվականից դպրոցը սկսում է ղեկավարել 6 հոգուց կազմված հոգաբարձությունը, որը տեսուչ է հրավիրում, վերանորոգում Նիկողայոս եպիսկոպոսի կառուցած դպրոցական սենյակները, որտեղ առաջվա նման տեղավորված էր դպրոցը, կենտարեր շունչ հաղորդում «Ընթերցասիրական» ընկերության բացած ընթերցարանին՝ համալրելով գրականությամբ, բացում գրախանութ, որտեղից աշակերտները դասագրքերը և գրենական պիտույքներ ձեռք էին բերում մատչելի գներով: Ընդ որում, չքավոր երեխաները դրանք անվճար էին ստանում:

1870 - ական թթ. սկզբներին հոգաբարձության հրավերով Երևանից, Թիֆլիսից, Ս.Պետերբուրգից, Շամախիից և այլ վայրերից Ալեքսանդրապոլ եկան մի խումբ մտավորականներ, որոնք տեղի գործիչների հետ մեծ գործ կատարեցին հոգևոր դպրոցի կրթության որակն ու հարգը բարձրացնելու համար: Հնավորված ուսուցչական խմբի անդամները հայ մամուլի աշխատակիցներ էին, գիտական բնույթի աշխատությունների և դասագրքերի հեղինակներ, թարգմանիչներ, գրողներ, բժիշկներ: Այս տարիներին հոգևոր դպրոցը հրաբուխի նմանվեց, որը ժայթքեց և իր խարամի տակ թաղեց մանկավարժական հնացած մեթոդներն ու գաղափարները: Հետագայում դպրոցի աշակերտներից մեկը պիտի գրեր. «...այս դպրոցը գիտելիքներ ամբարելու և հոգևկան հաճույքների միջավայր էր...»:[33] 1850-1880-ական թթ. դպրոցն ունեցել է երեք կամ չորս հիմնական և երկու կամ երեք պատրաստական և զուգընթաց դասարաններ:

Տեսուչ Ս. Բեկնազարյանը, օգտվելով բարենպաստ հանգամանքներից, հոգևոր դպրոցին փորձում է աշխարհիկ բովանդակություն հաղորդել: Նրա տեսչության տարիներին (1871-1875թթ.) ավանդական առարկաներից բացի դասավանդվում էին գերմաներեն, հայրենագիտություն, բնական պատմություն, երկրաչափություն, հանրահաշիվ, ֆիզիկա, մարդակազմություն և մարմնամարզություն, ընդ որում յուրաքանչյուր առարկայի համար առանձին ուսումնական ծրագրով: Պարբերաբար հրավիրվում են մանկավարժական ժողովներ: Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ն 1873թ. մարտին հաստատում է դպրոցի առաջին կանոնադրությունը,[34] համաձայն որի հոգևոր դպրոցը վերածվում է վիճակային դպրոցի, վաղուց արդեն գործող կարգը, փաստորեն իրավական ուժ է ստանում, ալեքսանդրապոլցիների երեխաներից բացի հոգևոր դպրոցում կարող էին սովորել նաև Ալեքսանդրապոլի գավառի գյուղերից և սահմանակից գավառներից: Դպրոցն ուներ համեմատաբար լավ ուսումնանյութական հնարավորություններ՝ տարբեր տեսակի գործիքներ ու մոդելներ, աշխարհագրական քարտեզներ, ատլասների հավաքածուներ, արտասահմանից բերված գլոբուսներ և այլն:

Վիճակային դպրոցի ուսուցիչները և աշակերտները հստակ ծրագրով բարձրացնում էին ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը և տարածում էին ազատագրական պայքարի գաղափարներ: Այդ նպատակին էին ծառայում դպրոցի դահլիճում և այլ տեղերում հայրենասիրական թեմաներով թատերգությունների բեմադրությունները: Դպրոցի ուսուցիչները և աշակերտները մասնակցում էին Սբ Վարդանանց և Սբ

---

[32] Կանոն յաղագս ծխական հոգևոր դպրոցացն հայոց որ ի Ռուսաստան, «Արարատ»,1868, թիւ Զ, հոկտեմբեր, էջ70-72: Թեմական դպրոցաց կանոնադրութիւն, «Արարատ», 1869, թիւ Ժ, փետրուար, էջ 141-146:

[33] ՀԱԱ, ֆ. 1262, ց. 1, գ. 25, թ. 5:

[34] Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք ԺԱ (11-րդ), Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի Քերեստեճեան կաթողիկոս ամենայն հայոց (1866 - 1882), Փաստաթղթերի եւ նիւթերի ժողովածու, կազմեց Սանդրո Բէհբուդեանը, փաստ. N 346, Եր., 2004, էջ 447:

Թուրքմանչայ ազգային-եկեղեցական տոների կատարմանը, այդ կապակցությամբ արտասանում էին ճառեր: Նրանցից ոմանք ներգրավված էին 1869թ. Ալեքսանդրապոլում և 1874թ. Մեծ Դարաքիլիսայում (այժմ՝ ք. Վանաձոր) տեղծված «Բարենպատակ ընկերություն» և «Հայրենիքի սիրո գրասենյակ» ազատասիրական խմբակների կողմից տարվող աշխատանքներում:[35] 1877թ. հոգևոր վիճակային և Արդության դպրոցների ուսուցիչները ստեղծում են «Ընթերցասիրաց ընկերություն», որն աշակերտ - աշակերտուհիների մուծած անդամավճարներով ընթերցանության համար մանկական գրքեր էր ձեռք բերում:[36] Նույն թվականին դպրոցի աշակերտ Երվանդ Լալայանցը փորձում է «Ազգագրական» թերթ հրատարակել»,[37] բայց հաջողություն չի ունենում:

Դպրոցի բնականոն աշխատանքը շարունակվում է մինչև 1877թ. սեպտեմբեր ամիսը, երբ 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի պատճառով այն փակվում է: Դպրոցական շինությունը վերածվում է հիվանդանոցի: Դասերը վերսկսվում են միայն 1878թ. սեպտեմբերին:

Դեռ 1878թ. հուլիսին ընտրված նոր հոգաբարձությունն ուսուցչական կազմը համալրում է նոր աշխատակիցներով: Դասավանդվում էին հետևյալ առարկաները՝ կրոն, հայոց և ռուսաց լեզուներ, հայոց և ընդհանուր պատմություն, բնական պատմություն, աշխարհագրություն, թվաբանություն, հանրահաշիվ, երկրաչափություն, բնագիտություն, վայելչագրություն, նկարչություն, գծագրություն և երգ: Դասերից հետո ուսուցիչները հաճախ լրացուցիչ պարապմունքներ էին կազմակերպում, դասախոսություններ կարդում «քաղաքացու իրավունքների և պարտականությունների մասին»:[38] Դպրոցի տեսուչները (Ս. Բեկնազարյան, Ա. Հովհաննիսյան, Գ. Հովհաննիսյան և Գ. Տեր-Պետրոսյան) խստորեն հետևում էին ուսուցիչների և աշակերտների կարգապահությանը և բացակայություններին: Նրանք ծնողների հետ պարբերաբար հանդիպումներ էին կազմակերպում, աշակերտների պարտականությունների մասին «կանոններ» էին գրում ու փակցնում դասարաններում կամ «յիշատակարաններ» տպագրում:[39]

1870 - ական թթ. վերջերին և 1880 - ական թթ. սկզբներին դպրոցի ուսուցիչները և բարձր դասարանի աշակերտները հանդես են գալիս բարեգործական մի շարք նախաձեռնություններով. թատերական ներկայացումների բեմադրություններ և մասնակցություն ավետիսների՝[40] հօգուտ Սահականուշյան օրիորդաց դպրոցի, հանգանակություններ տվից տուժած վանեցիների համար, գրքերի նվիրատվություններ դպրոցներին և այլն:

1881 թ. լրանում է դպրոցի քառասնամյակը: Այս կապակցությամբ Սբ Ամենափրկիչ եկեղեցու գավթում կառուցվում է դպրոցական նոր շենք: Դպրոցի հոգաբարձությունը Հ. Ղուկասյանին և Պ. Հայկազունուն հանձնարարում է գրել դպրոցի «լիակատար պատմութիւնը», բայց դա ինչ- ինչ պատճառներով չի հաջողվում: Ուսումնական գործընթացն առանց էական փոփոխությունների շարունակվում է մինչև 1885թ. մարտ, երբ հայկական բոլոր դպրոցների նկատմամբ ցարական կառավարության որդեգրած խիստ քաղաքականության պատճառով դպրոցը փակվում է:

Ալեքսանդրապոլի հասարակական կյանքը զբաղեցնող խնդիրներից շատերը կապված էին դպրոցի հետ: Դպրոցի նկարագրով էր բնորոշվում քաղաքի հայ հասա-

---

[35] *Մանրամասն տես Պարսամյան Վ., նշվ. աշխ., էջ 111-165:*
[36] *Գեղամեանց Յ., Ախալցխայից մինչեւ Անի, «Փորձ», Թիֆլիս, 1880, N 4, էջ 65:*
[37] *Սարգսյան Ա., Ազգագրական գիտնականը, «Բանվոր», N 39, 1981, էջ 3:*
[38] *ՀԱԱ, ֆ. 1262, ց. 1, գ. 25, թ. 12:*
[39] *Յովհաննիսեանց Գ., Աշակերտաց բացակայութիւն Ալէքսանդրոպոլի վիճակային Հայոց հոգեւոր դպրոցում, «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1884, N 49, էջ1 - 3:*
[40] *Սուրբննդյան երեկոյին ժամաշապիկներ հագած այցերում էին բնակիչներին և կամավոր նվիրատվություններ հավաքում:*

բակական կյանքի ակտիվությունը: Հասարակական կյանքը երբեմն վրդովվում էր դպրոցի ուսուցիչների միջև տարաձայնությունների, Ալեքսանդրապոլի «հոգևոր կառավարության» և դպրոցի հոգաբարձության անհամերաշխ հարաբերությունների պատճառով: 1870-ականների երկրորդ կեսին և 1880-ականների սկզբներին հոգաբարձությունների ընտրությունները և տեսուչների փոփոխությունները լարված էին անցնում, որը պայմանավորված էր քաղաքի հայտնի հասարակական խմբավորումների մրցակցությամբ: Այս խմբավորումների ներկայացուցիչները մամուլում բավական սուր ելույթներ էին ունենում, քննադատում միմյանց, սակայն դա հետադիմական քննադատություն չէր: Բանավեճերն ու քննարկումները նպաստում էին դպրոցի առաջադիմությանը:

Այսպիսով, մի շարք արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվում է, որ Ալեքսանդրապոլի հոգևոր դպրոցը հիմնադրվել է 1840թ.՝ նախատիպ ունենալով Հովհաննես Դավթյանի մասնավոր դպրոցը: Դպրոցի գործունեության սկզբնական փուլն ավարտվում է 1853 թ.: 1853-1856թթ. Ղրիմի պատերազմից հետո դպրոցը նորից սկսում է կանոնավոր գործել: 1858-1865թթ. հայ հասարակական-քաղաքական կյանքի ընդհանուր վերելքի պայմաններում դպրոցի ուսուցիչները և աշակերտները հայտնի չափով նպաստում են Ալեքսանդրապոլի հասարակության մտավոր զարգացման մակարդակի բարձրացմանը: 1860- ական թթ. վերջերից դպրոցի կյանքում մեկնարկում է փոփոխությունների մի շրջան՝ մինչև 1885թ.: Ժամանակի գործիչներն այդ շրջանը բնորոշել են որպես «Ալէքսանդրապոլի ուսումնարանների ոսկեդար»:[41]

Ալեքսանդրապոլի հոգևոր դպրոցն ապրում էր եռուն կրթական կյանքով և աշխույժ մշակութային առօրյայով: Այն որոշակի ժամանակահատվածում դարձավ ազատագրական շարժման կենտրոն: Հասարակական կյանքում դպրոցի դերը չէր սահմանափակվում կրթական և դաստիարակչական խնդիրների լուծմամբ:

АЛЕКСАНДРОПОЛЬСКОЕ ДУХОВНОЕ УЧИЛИЩЕ В 1830 - 1880 гг.

___ *Резюме* ___ ___ *Г. Айвазян* ___

В 1830 - х годах в Гюмри основное образование дети получали в частных учебных заведениях. Со временем у общества назрела потребность в создании нормального училища. В 1840г. по настоянию тогдашнего Александропольского викария епископа Никогоса было открыто Александропольское духовное училище с двумя классами и соответствующей учебной программой. В 1853г. завершился начальный период истории училища. К 1858г. училище вновь стало действовать. Учителя, воспитанники училища и интеллигенция становились проповедниками просветительских идей в обществе. С конца 1860-ых годов обучение в училище постепенно приобретало светский характер. Со временем методы преподавания и обучения воспитанников училища совершенствовались.

Александропольское духовное училище жило энергичной образовательно-культурной жизнью. В общественной жизни роль училища не ограничивалось решением задач, связанных с учебно - воспитательной частью. Некоторое время училище являлось центром освободительного движения.

---

[41] *Դասապետեանց Գ., Սարգիս Միրզայեանց, «Մխուրեան», Ալէքսանդրապոլ, 1907, N 37, էջ 4:*